

Կազմակերպվեց մարզի բուժքույրերի անդրանիկ գիտաժողովը

28.10.2016

Գեղարքունիքի մարզպետարանի եւ «Հայաստանի բուժքույրերի միավորում», «Հայաստանի լրագրագրականների ասոցիացիա» ՀԿ-ի եւ ՀՀ ԱՆ «Հիվանդությունների կանխարգելման ազգային կենտրոնի» ներհիվանդանոցային վարակների կանխարգելման բաժնի նախաձեռնությամբ կազմակերպվեց Գեղարքունիքի մարզի բուժքույրերի անդրանիկ գիտաժողովը: Այն բացեց Գեղարքունիքի մարզպետի տեղակալ Անդրանիկ Հակոբյանը: Օրակարգային թեմաներով դասախոսություններ կարդացին ՀՀ Առողջապահության նախարարության «Հիվանդությունների կանխարգելման ազգային կենտրոն»-ի ներհիվանդանոցային վարակների կանխարգելման բաժնի պետ Ռոմելա Աբովյանը, «Հայաստանի լրագրագրականների ասոցիացիա» ՀԿ նախագահ, ՀՀ ԱՆ գլխավոր լրագրագրական Հասմիկ Ղազինյանը եւ «Հայաստանի բուժքույրերի միավորում» ՀԿ նախագահ, Միքայելյանի անվան վիրաբուժության ինստիտուտի գլխավոր բուժքույր Գեղանուշ Ստեփանյանը: Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության եւ սոցիալական ապահովության վարչության պետ Անուշ Պողոսյանի տեղեկացմամբ՝ այս գիտաժողովը մարզում կազմակերպվում է առաջին անգամ, եւ որի հիմնական նպատակն է՝ բարձրացնել բուժքույրերի մասնագիտական գիտելիքներն ու կարողությունները, ինչպես նաեւ՝ բուժապասարկման որակը: «Այսօրվա կոնգրեսում ներկայացվող դասախոսություններում հիմնական շեշտը դրվելու է ներհիվանդանոցային վարակների կանխարգելման վրա: Խոսվելու է նաեւ արդիական հիվանդությունների մասին, որոնց թվում՝ վիրուսային հեպատիտների եւ լեշմանիոզի: Ի դեպ, «Հայաստանի բուժքույրերի միավորում» ՀԿ անդամ են համարվում Գեղարքունիքի մարզի բուժհաստատությունների բուժքույրերի մեծամասնությունը», - ներկայացրեց Անուշ Պողոսյանը:

Իսկ գիտաժողովի դասախոսները հավաստեցին, որ նմանատիպ բուժքույրական գիտաժողովները կկազմակերպվեն նաեւ Հայաստանի բոլոր մարզերում, որոնք կկրեն շարունակական բնույթ: «Նախկինում վերապատրաստման նման գիտաժողով- դասընթացներ անցկացնում էինք մայրաքաղաքում, որտեղ հնարավոր էր լինում յուրաքանչյուր մարզից հրավիրել մինչեւ 15 բուժքույր, մինչդեռ այժմ այդ հնարավորությունները տասնապատկվում են: Բացի այդ, տարվա ընթացքում փորձելու ենք 2-3 անգամ յուրաքանչյուր մարզում կազմակերպել նմանատիպ դասընթացներ: Սա կլինի շարունակական կրթական ծրագրի մի մասը», - նշեց «Հայաստանի լրագրագրականների ասոցիացիա» ՀԿ նախագահ, ՀՀ գլխավոր լրագրագրական Հասմիկ Ղազինյանը: «Մենք ոչ միայն գիտելիքներ ենք հաղորդելու բուժքույրերին, այլ նաեւ ստուգելու ենք նրանց ձեռք բերածը, մեր ուշադրության կենտրոնում են լինելու բուժքույրերի մասնագիտական կարողությունների բարձրացման, վերապատրաստման հետ կապված խնդիրները: Մերօրյա աշխարհում առողջապահությունը եւս զարգանում է մեծ արագությամբ, ինչը մեզանից պահանջում է մասնագիտական գիտելիքների համարժեք բարձրացում: Սա պարտադիր պայման է՝ հանուն մեր քաղաքացիների առողջության պահպանման», - նշեց «Հայաստանի բուժքույրերի միավորում» ՀԿ նախագահ Գեղանուշ Ստեփանյանը:

Գիտաժողովի մասնակիցներին ողջունեց Գեղարքունիքի մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանը: «Ձեր մասնագիտական կարողություններից շատ բան է կախված: Հիվանդները մշտապես ձեր ջերմ վերաբերմունքի կարիքն ունեն: Համոզված եմ, որ դուք այստեղից ձեզ հետ կտանք կարելու գիտելիքներ, որոնք կձառայեցնեն ձեր մասնագիտական կարողությունների բարձրացմանը», - գիտաժողովի մասնակիցներին դիմեց մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանը: Մասնագիտական գործունեության համար շնորհակալություն հայտնելով մարզի բուժքույրերին՝ մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանը միաժամանակ Գեղարքունիքի մարզպետի շնորհակալագրով

պարգևատրեց Մարտունու ԲԿ, Ճամբարակի ԱԿ, Վարդենիսի հիվանդանոցի, Սեւանի ԲԿ, Գավառի ԲԿ եւ Գավառի պոլիկլինիկայի բուժքույրեր Աիդա Պողոսյանին, Սյուզաննա Առաքելյանին, Գայանե Սաղաթելյանին, Վարսիկ Ղազարյանին, Օֆելյա Գեւորգյանին, Արաքսյա Կոստանյանին: